ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1204-Ա « 04 » մարտի 2026թ.

«ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՏԻԼԻՆԻ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հաշվի առնելով «Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գ.Նազարյանի գրությունը՝ Հունաստանի Հանրապետության Միտիլինի քաղաքում անցկացվող երաժշտական դպրոցների միջազգային 3-րդ փառատոնին մասնակցելու նպատակով.

1. «Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գարիկ Նազարյանին՝ 2026 թվականի մարտի 28-ից ապրիլի 1-ը ներառյալ գործուղել Հունաստանի Հանրապետության Միտիլինի քաղաք:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են «Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. «Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գարիկ Նազարյանի բացակայության ընթացքում «Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը

վերապահել նույն համայնքային ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով փոխտնօրեն Սվետլանա Հակոբյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ